# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

## 24.07.2017 թ. կնքված N ՀՀ ՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 ծածկագրով գնման պայմանագրի

ք. Երևան 10.11.2017թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն, ի դեմս կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Երևանի տնաշինական կոմբինատ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Լ. Լաչինյանի, որը գործում է կոոպերատիվի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով 24.07.2017 թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲԸԱՇՁԲ-17/5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.4-րդ կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 1.3 կետում և հավելված N 2-ի (օրացուցային գրաֆիկ) 4-րդ (Միաձույլ ե/բ սյուների ամրանավորման և բետոնացման աշխատանքներ) տողում <<15.11.2017>> բառերը փոխարինել <<12.12.2017>> բառերով:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Կողմերի միջև կնքված Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝ | ԿԱՊԱԼԱՌՈՒ՝ |
|---|---|
| ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտե<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ կառավարական տուն 3<br>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն<br>Հ/Հ 900011012698<br>ՀՎՀՀ 02565827 | <<Երևանի տնաշինական կոմբինատ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Սիլիկյան արդ. հանգույց-8<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br><<Արաբկիր>> մասնաճյուղ<br>Հ/Հ 247121341215<br>ՀՎՀՀ 01228598 |
| Աշխատակազմի ղեկավար՝ | Տնօրեն՝ |
| ______________ Ա. Մկրտչյան<br>(ստորագրություն)<br>Կ.Տ. | ______________ Լ. Լաչինյան<br>(ստորագրություն)<br>ԿՏ |